ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«15» 03 2019թ.
N 17-Հ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«6» մարտի 2019թ.
N 145-Հ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի «Բյուջեների կատարման» կարգի 38-րդ կետի պահանջներով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին մատուցում է կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2019թ. հունվարի 01-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. **ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.**

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
3) ՀՀ պետական եկամուտների կոմիտեում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
5) Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեն չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) և 5) ենթակետերի:

4. **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.**

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,
4) Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-ՆԳ որոշման: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառ.միջքաղ. կապ	Կառ.քաղ. կապ	Լրացուցիչ կառ. քաղ. կապ	Ազդանշա-նային հարմարանք	Ընդամենը
1.	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի աշխատասենյակ	1 x 500 000	1 x 225 000			725 000
2.	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի ընդունարան			1 x 112 500	10 000	122 500
3.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000				100 000
4.	Ընդամենը տարեկան վարձը՝					947 500
	Ինը հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր դրամ					

5) Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ,

6) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

7) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 28.06.2016թ. N26-Ա և 23.05.2016թ. N58-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

________________ Ա. Վանեցյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

________________ Դ. Անանյան

ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011054013
հվհհ 02647057

Կ.Տ.

Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն ____________ հեռախոս՝ 1-99

ԴԴ ԱԱԾ
Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն
Ելից № 121922 18.03.18